ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերութան Ժորայի Ավդալյանի 23.08.2023 թվականի թիվ 02/14434 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1920005 վկայականը, 05.09.2007 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 2388 պայմանագիրը, 07.08.2007 թվականի հողատարածքի վարձակալության թիվ 2387 պայմանագիրը, 17 օգոստոսի 2007 թվականի Վանաձորի քաղաքապետի թիվ 1011 որոշումը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, Վանաձոր համայնքի ավագանու 29. 11. 2023 թվականի թիվ 47 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ, 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-4 թիվ 35/12Գ հասցեում գտնվող 0.002130 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-4 թիվ 35/12Գ հասցեում գտնվող, Մերութան Ժորայի Ավդալյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.3քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 94620

(իննսունչորս հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամով, նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մերուժան Ժորայի Ավդալյանին:

3.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Մերուժան Ժորայի Ավդալյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 21.3քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

4. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-4 թիվ 35/12գ հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

5. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-4 թիվ 35/12գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք. Տարոն-2 ՔՇՀ-4 թաղամաս, 35/2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 11
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 1913

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ 13/1-1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱԿ ԹԵԼՄԱՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ
ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արաիկ Թելմանի Մովսիսյանի 29.07.2025 թվականի թիվ 02/10686 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16022017-06-0031 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /249769/, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Թևոսյան փողոց 13/1-1 հասցեում գտնվող Արաիկ Թելմանի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Թևոսյան փողոց 13/1-1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.05799 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 464.06 հա մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 13/1 բնակելի տուն:

բ.0.00681 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 6.77քմ մակերեսով պարիսպին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ս. Թևոսյան փողոց, 13/2 պարիսպ:

3. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Թևոսյան փողոց 13/1-1 հասցեում 0.00681 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի, իսկ 6.77քմ մակերեսով բնակելի նշանակության պարիսպի գործառնական նշանակությունը, բնակելի նշանակության պարիսպից՝ որպես հասարակական նշանակության պարիսպի:

4. Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ օգոստոսի 11
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 1914

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԾԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ
28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սյուզի Սամվելի Ալեքսանյանի 01.08.2025 թվականի թիվ 02/10837 դիմումը, անշարժ - գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31012025-06-0013 վկայականը, «ԱՐՄԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մարշալ Բաղրամյան պողոտա 28 հասցեում գտնվող 0.151413 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 11
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 1915


ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԷԼԵԿՏՐԱՖԻԿԱՑԻԱՅԻ ՓՈՂՈՑ
12/8 ՀԱՍՅԵՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԱՎԻԹ
ԲԵՆԻԿԻ ԹԵՅՄՈՒՐԱԶՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Բենիկի Թեյմուրազյանի 09.11.2023 թվականի թիվ 02/19602 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20032025-06-0076 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Էլեկտրաֆիկացիայի փողոց, 12/8 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 46.8քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 42.5քմ) ավտոտնակը 78300 (յոթանասունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 46.8քմ մակերեսով հողամասը 135140 (հարյուր երեսունհինգ հազար հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Դավիթ Բենիկի Թեյմուրազյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Դավիթ Բենիկի Թեյմուրազյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N1916


ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՑ ԹԱՂ. 7-ՐԴ ՓՈՂ.
ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՈՐԳԻ ԱՐՏԵՄԻ ԹԱԶԱՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեորգի Արտեմի Թազայանի լիազորված անձ՝ Շոթա Լուվիշի Սարգսյանի,
10.07.2025թ. թիվ 02/9673 դիմումը, 12.06.1965թ. տրված գույքային թերթը, 18.06.2025թ.
տրված թիվ 3138 (նոտարական ակտի կող: 741-20250618-90-9105362) լիազորագիրը,
24.06.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3313 (նոտարական ակտի
կող: 741-20250621-84-9117457) և թիվ 3314 (նոտարական ակտի կող:
741-20250621-84-9117522) վկայագրերը, հանրային ծառայություններ մատուցող
կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու
մասին որոշման /249432/ քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված
հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 15.07.2025թ.
«Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված ՎՆ 1-171/25 Ի շինությունների տեխնիկական
վիճակի վերաբերյալ եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի
Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 7-րդ փող. թիվ 3 հասցեի բնակելի տան կառուցման և
սպասարկման համար անհրաժեշտ օրինական 590.0քմ և դրան կից 66.98քմ մակերեսներով
հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում
ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և
ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում
քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Անհատական բնակելի տունը
կառուցվել է 1962-1990թթ, բնակելի տան գբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ
հողամասի մակերեսը փաստացի կազմում է 656.98քմ:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման
մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ.
թիվ 698-Ն որոշումով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված
անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության
2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ
ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Գեորգի Արտեմի Թազայանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 7-րդ փող. թիվ 3 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 590.0քմ մակերեսով հողամասին կից 66.98քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Գեորգի Արտեմի Թազայանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը, Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 7-րդ փող. թիվ 3 հասցեում, կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 656.98քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հաստատել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 7-րդ փող. թիվ 3 հասցեում գտնվող Գեորգի Արտեմի Թազայանին պատկանող բնակելի տան գրադեցրած 0,065698 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի ճշտված սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Խնձորուտ թաղամասի 7-րդ փողոց, 3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 11
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 1917

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼ ԵՂՇԱՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զելֆինա Փայլակի Զարգարյանի դիմումն անչափահաս թոռան՝ Արմեն Սամվել Եղշատյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 22-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 16, կետ 5), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղու թիվ 90 հանրակացարանի թիվ 318 սենյակի բնակիչ Զելֆինա Փայլակի Զարգարյանին (ծնված՝ 07.06.1956թ., անձնագիր՝ AT 0301383, տրված՝ 11.11.2019թ., 066-ի կողմից) նշանակել իր անչափահաս թոռան՝ Արմեն Սամվել Եղշատյանի (ծնված՝ 08.01.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 243908, տրված՝ 10.01.2013թ., ՔԿԱԳ Վանաձորի տ/բ-ի կողմից) նկատմամբ խնամակալ մեկ տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 11
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 1918

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՅ 2/5 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆԿՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՐԳԻՍ ՌՈԲԵՐՏԻ
ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՀՈՒՆԻՍԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1453 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒՓԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Ռոբերտի Այվազյանի 07.06.2023 թվականի թիվ 02/9188 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27032025-06-0027 վկայականը, 29.11.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Խորենացու փողոց 2/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 16.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 14.7քմ) ավտոտնակը 62230 (վաթսուներկու հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 16.5քմ մակերեսով հողամասը 410670 (չորս հարյուր տասը հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սարգիս Ռոբերտի Այվազյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սարգիս Ռոբերտի Այվազյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հունիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Խորենացու փողոց 2/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Սարգիս Ռոբերտի Այվազյանին օտարելու մասին» թիվ 1453 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2025 թվականի N 1919

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ)
ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՌԱԶՄԻԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Վաղարշակի Համբարյանի (ծնված՝ 11.02.1952թ.) 04.08.2025 թվականի թիվ 02/9382 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 16.06.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3413 (նոտարական ակտի կոդ: 763-20250616-84-9096245) լրացուցիչ վկայագիրը, 10.05.1988 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 22.07.2025 թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-175/ 25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամասի 1-ին փողոց թիվ 33 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 828.0քմ դրան կից 299.0քմ մակերեսներով հողամասերը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1960-1985թթ., դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1127.0քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Ռազմիկ Վաղարշակի Համբարյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամասի 1-ին փողոց թիվ

33 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 828.0քմ մակերեսով հողամասին 299.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Ռազմիկ Վաղարշակի Համբարյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (Նախկին Ժդանով) թաղամասի 1-ին փողոց թիվ 33 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.1127 հա մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԱՐՄԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (Նախկին Ժդանով) թաղամասի 1-ին փողոց թիվ 33 հասցեում գտնվող 0.1127 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 1-ին փողոց, 33 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 12
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2025 թվականի N1920

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇՈՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հարություն Մխիթարյանի դիմումն իր նկատմամբ պատրոնաժ սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2025 թվականի օգոստոսի 05-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 18, կետ 2), հաշվի առնելով, որ Հարություն Աշոտի Մխիթարյանն առաջին խմբի հաշմանդամ է, վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքերը և կատարել պարտականությունները, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ փողոցի թիվ 34 շենքի, թիվ 89 բնակարանի բնակիչ Վահե Աշոտի Մխիթարյանին (ծնված՝ 03.06.1986թ., անձնագիր՝ AP 0520560, տրված՝ 11.08.2016թ., 018-ի կողմից), նշանակել իր եղբոր՝ Հարություն Աշոտի Մխիթարյանի (ծնված՝ 13.01.1984թ., նույնականացման քարտ՝ 002545796, տրված՝ 05.11.2015թ., 018-ի կողմից) նկատմամբ պատրոն (օգնական):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 12
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1921

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ 9-1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Ալեքսեյի Մանուկյանի 05.08.2025 թվականի թիվ 02/11039 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19022021-06-0019 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 30.07.2025թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր:2025PMQ8VJ), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 9-1 հասցեում գտնվող 0.25553 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1922

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ 52
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Իսրայելի Պողոսյանի 01.08.2025 թվականի թիվ 02/10829 դիմումը, 22.07.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-22072025-06-0190 որոշումը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց 52 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.08078 հա մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:


2. 0.08078 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1923

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ 7 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռիմա Արտակի Ղազարյանի 05.08.2025 թվականի թիվ 02/11043 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14102020-06-0025 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 30.07.2025թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025FW5XFP), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 7 հասցեում գտնվող 0.044275 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1924

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ 7-1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Գազիկի Սարգսյանի 05.08.2025 թվականի թիվ 02/11042 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22032019-06-0018 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 30.07.2025թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025UMQMEC), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 7-1 հասցեում գտնվող 0.044275 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1925

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ 11-1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռիմա Արտակի Ղազարյանի 05.08.2025 թվականի թիվ 02/11044 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25092023-06-0037 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 30.07.2025թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20258PMSZQ), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 11-1 հասցեում գտնվող 0.1064 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1926

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 11 ՇԵՆՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Մինասի Դավթյանի 01.12.2023թ. թիվ 02/21343 դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 28.11.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023JZJVK2), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 11 շենքի արևմտյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 19.2քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես 19.1քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 19.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Համապատասխանեցնել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան փող թիվ 11/30 հասցեում (հողամասի ծածկագիր: 06-001-0740-0055) գտնվող, 0.0023 հա մակերեսով


հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և հաստատել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողեր, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողեր:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնական կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնական կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

6. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 11 շենքի արևմտյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց, 11/2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՔԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1927

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ,
ՍԵՔԱՍՏԻԱ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովսեփ Սերգեյի Ասիկյանի 11.12.2023թ. թիվ 02/22035 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 08.12.2023թ. թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023H5WPZJ), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս, Սեբաստիա փողոցի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 21.38քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.51քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 19.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնական կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս, Սեբաստիա փողոցի հարավային մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս, 21/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1928

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 42 ՀԱՍՅԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՄԵՐՈՒԺԱՆ ՌԱԶՄԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերութան Ռազմիկի Հարությունյանի 11.06.2025թ. թիվ 02/8136 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26112024-06-0044 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասերի հատակագիծը, հողամասի բաժանման սխեման, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Տարանջատել Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 12-րդ փողոց, 42 հասցեում գտնվող Մերութան Ռազմիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի

2.Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 12-րդ փողոց, 42 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.0.080607 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 12-րդ փողոց, 19 բնակելի տուն:

բ.0.019541 հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 12-րդ փողոց, 19/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1929

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 70/9
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ՄԱՌԱՆԸ, ԾԱԾԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ
ԷԴԳԱՐ ՀԱՄԼԵՏԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդգար Համլետի Բաբայանի 21.11.2023 թվականի թիվ 02/20469 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20062025-06-0016 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 70/9 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 26.39 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23.8 քմ) մառանը 88310 (ութսուն ութ հազար երեք հարյուր տաս) ՀՀ դրամով, 11.61 քմ մակերեսով ծածկը 38850 (երեսունութ ութ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 114.57 քմ մակերեսով հողամասը 330830 (երեք հարյուր երեսուն հազար ութ հարյուր երեսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Էդգար Համլետի Բաբայանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Էդգար Համլետի Բաբայանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մառանի, ծածկի և հողամասի առավաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1930

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ղ. ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ 94/14
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍՐ ԱԼԻԿ ՀԱՅԿԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 261
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալիկ Հայկի Հախվերդյանի 07.01.2025թ թիվ 30 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14122021-06-0061 վկայականը, 26.04.2023թ Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ), դ) և ե) ենթակետերով և 36-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Ղ. Աղայան փողոց 94/14 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 49.65քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 40.1քմ, որից 15.98քմ նկուղ, 24.12քմ ավտոտնակ) ավտոտնակը 97770 (իննսունյոթ հազար յոթ հարյուր յոթանասուն) դրամով, 0.33քմ պարիսպը 1300 (հազար երեք հարյուր) դրամով և դրանցով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 32.72քմ մակերեսով հողամասը 145340 (հարյուր քառասունհինգ հազար երեք հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ալիկ Հայկի Հախվերդյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ալիկ Հայկի Հախվերդյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի, պարսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ղեկավարի 05 փետրվարի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Ղ. Աղայան փողոց 94/14 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը, պարիսպը և դրանցով զբաղեցված հողամասը Ալիկ Հայկի Հախվերդյանին օտարելու մասին» թիվ 261 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՒՄԱՆ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1931

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1096
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմքը ընդունելով Հեղինե Փաշոյի Սահակյանի դիմումը, 12 մայիսի 2025 թվականի թիվ 1096 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 05/06/2025 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-05062025-06-0169 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 մայիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Ն. Ստեփանյան փողոց թիվ 10 հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Հեղինե Փաշոյի Սահակյանի և Նելլի Փաշոյի Սահակյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1096 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման նախաբանում «օրինական 150.0քմ և նրան կից 126.0քմ» բառերը փոխարինել «օրինական 150.0քմ և դրան կից 106.6քմ» բառերով:

3. Որոշման 1-ին կետում «օրինական 150.0քմ մակերեսով հողամասին կից 126.0քմ» բառերը փոխարինել «օրինական 150.0քմ մակերեսով հողամասին կից 106.6քմ»

4. Որոշման 2-րդ կետում «276.0քմ» բառերը փոխարինել «256.6քմ» բառերով :

5. Որոշման 3-րդ կետում «0.0276հա» բառերը փոխարինել «0.02566հա» բառերով :

5. Վանաձոր համայնքի ղեկավարի 12 մայիսի 2025 թվականի թվականի թիվ 1096 որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1932

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ
46/1-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարիամ Հարությունի Մարտիրոսյանի 05.08.2025 թվականի թիվ 02/11002 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28112016-06-0034 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 07 հոկտեմբերի 2016 թվականի թիվ 1010-Ա որոշումը, 07.11.2016 թվականի հողատարածքի վարձակալության թիվ 223 պայմանագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 14 մայիսի 2015 թվականի թիվ 588-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց 46/1-1/1 հասցեում գտնվող 60.0 քմ մակերեսով հողատարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 07.08.2028 թվականը:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Մարիամ Հարությունի Մարտիրոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 60.0 քմ մակերեսով հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 1.0 քմ համար վճարի չափը ամսական սահմանելով 168 (հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1933

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 39/9Գ
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Պարոյրի Գաբրիելյանի 02.07.2025 թվականի թիվ 02/9166 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17072025-06-0071 վկայականը, 01.11.2013 թվականի թիվ 290 համաձայնագիրը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 04 հոկտեմբերի 2013 թվականի թիվ 1052-Ա որոշումը, 10.08.2005 թվականի հողատարածքի վարձակալության թիվ 888 պայմանագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 14 մայիսի 2015 թվականի թիվ 588-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 39/9գ հասցեում գտնվող 20.0քմ մակերեսով հողատարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 31.12.2033 թվականը:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սամվել Պարոյրի Գաբրիելյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 1.0քմ համար վճարի չափը ամսական սահմանելով 18 (տասնութ) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց 39/9գ հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, Գ. Նարեկացու փողոց, 39/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1934

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 103/2-1,
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 105-1-1, ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 103/2 ԵՎ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 103/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ
ԱՄԻՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԱԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ
ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Սարգսի Ամիրյանի 17.07.2025 թվականի թիվ 02/10051 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28122013-06-0009, 09022023-06-0010, 09012024-06-0053 և 15022024-06-0025 վկայականները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /249531/, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և 08.07.2025 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025PFSEWN), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Միավորել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 103/2-1, Երևանյան խճուղի 105-1-1, Երևանյան խճուղի 103/2 և Երևանյան խճուղի 103/3 հասցեներում գտնվող Աշոտ Սարգսի Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող 0.01947հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող շինությունները համաձայն՝ «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Երևանյան խճուղի, 103/3 ատամնաբուժարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1935

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ 19/9
ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՍԵՆ
ՍԱՐԳՍԻ ՀԱՄԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Սարգսի Հասանյանի լիազորված անձ Արմեն Սեյրանի Ոսկանյանի 19.09.2023 թվականի թիվ 02/16112 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15072025-06-0036 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաթումիի փողոց 19/9 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 32.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.56քմ) ավտոտնակը 63210 (վաթսուներեք հազար երկու հարյուր տաս) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 32.1քմ մակերեսով հողամասը 142590 (հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արսեն Սարգսի Հասանյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արսեն Սարգսի Հասանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1936

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՒԴՅԱԿՈՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՌՆԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Անուշավանի Ղարաքեշիշյանի (ծնված՝ 22.04.1959թ.) 13.05.2025 թվականի թիվ 02/6492 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 30.04.2024 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2910 վկայագիրը (նոտարական ակտի կոդը: 763-20240430-84-7903979), 08.01.1987 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 06.05.2025թ. թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025SXZ7P5), «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 06.06.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-140/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խուդյակովի փողոց թիվ 36 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ և նրան կից 45.3քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1968թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 245.3քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չափապանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Գառնիկ Անուշավանի Ղարաքեշիշյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Խուդյակովի փողոց թիվ 36 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ մակերեսով հողամասին կից 45.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Գառնիկ Անուշավանի Ղարաքեշիշյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Խուդյակովի փողոց թիվ 36 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 245.3քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Խուդյակովի փողոց թիվ 36 հասցեում գտնվող 0.02453 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մարշալ Խուդյակովի փողոց, 36/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1937

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 1-ԻՆ ԱՎԱՆ
ԹԻՎ 33 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐԱՄԱՐԳ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ԵՎ ԴԻԱՆԱ ԳԵՎՈՐԳԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիրամարգ Արամայիսի Գրիգորյանի (ծնված՝ 23.03.1973թ.) և Դիանա Գևորգի Գրիգորյանի (ծնված՝ 07.10.1995թ.) 25.04.2025թ. թիվ 02/5743 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 16.07.2025 թվականի թիվ 4088 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 594-20250716-66-9194982), 16.07.2025 թվականի թիվ 4087 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 594-20250716-66-9194593), 16.07.2025 թվականի թիվ 4086 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 594-20250716-66-9194568), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 20.05.2025թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-114/24 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 1-ին ավան թիվ 33 (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 117.0քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1995-2022թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 117.0քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սիրամարգ Արամայիսի Գրիգորյանի և Դիանա Գևորգի Գրիգորյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 1-ին ավան թիվ 33 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 117.0քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ բացառությամբ՝ 2018թ. կառուցված 15.91քմ մակերեսով ծածկը և 2022թ. կառուցված 20.79քմ մակերեսով բնակելի տունը, համաձայն՝ «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

2. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Բուլղարական 1-ին ավան թիվ 33 (պայմանական) հասցեում գտնվող 0.01170 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բուլղարական ավան 1-ին թաղամաս, 33 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1938

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԶԵՐԿԱՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՐԳԵՎ ՊԱՏՎԱԿԱՆԻ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պարզև Պատվականի Մնացականյանի (ծնված՝ 01.04.1955թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 21.05.2025թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-121/25 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունն ու տեղագրական հատակագիծը, 31.05.2025թ. թիվ 2852 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 594-20250530-66-9047579), թիվ 2851 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 594-20250530-66-9047508) և թիվ 2853 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 594-20250530-66-9047590) հայտարարությունները, Բաժանորդի էպիկրիզը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Զերկասի փողոց թիվ 1/1 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 380.0քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1992-1995թթ.-ին և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 380.0քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1992թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Ճանաչել Պարզև Պատվականի Մնացականյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Զերկասի փողոց թիվ 1/1 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան

կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 380.0քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հաստատել Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Չերկասի փողոց թիվ 1/1 (պայմանական) հասցեում գտնվող 0.0380հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Չերկասի փողոց թիվ 1/1 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բազում թաղամաս, 2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1939

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ ՔՈԹԵՋԱՅԻՆ 10 ՓՈՂՈՑ 8
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌԱՖԱՅԵԼ ԲԱԲԿԵՆԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆայել Բաբկենի Դարբինյանի 23.06.2025թ. թիվ 02/8732 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26062014-06-0053 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր համայնք գյուղ Գուգարք, Քոթեջային 10-րդ փողոց, 8 հասցեում գտնվող, Ռաֆայել Բաբկենի Դարբինյանին սեփականության իրավունքով պատկանող 0.10881 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Փոխել Վանաձոր համայնք գյուղ Գուգարք, Քոթեջային 10-րդ փողոց, 8 հասցեում գտնվող, Ռաֆայել Բաբկենի Դարբինյանին սեփականության իրավունքով պատկանող 443.43քմ մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը՝ բնակելից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ հանդիսությունների սրահ:

3. Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1940

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ 7 ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑ 7/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ՝ Արմեն Հակոբջանյանի 30.07.2025 թվականի թիվ 01/10745 (ելիցի համար թիվ 02/12.14/5589-2025-30/07/2025) դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29042016-06-0030 և 27072025-06-0003 վկայականները, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4.6 մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ուսանողական փողոց 7 և Ուսանողական փողոց 7/3 հասցեներում գտնվող Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող 1.306627 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող 6745.02 քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինությունները՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29042016-06-0030 և 27072025-06-0003 վկայականների:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ուսանողական փողոց, 7 դպրոց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1941

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ 18/3
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիլա Մանթաշի Հակոբյանի և Արտյոմ Սերիկի Ղազարյանի 04.08.2025 թվականի թիվ 02/10930 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13032023-06-0045 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց 18/3 հասցեում գտնվող Լիլա Մանթաշի Հակոբյանին և Արտյոմ Սերիկի Ղազարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.0461 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N1942

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՂԻԱ ԱՍԱՏՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԵՎ
ԱՍԱՏՈՒՐ ԵՂԻԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եղիա Ասատուրի Պողոսյանի (ծնված՝ 02.01.1947թ.) լիազորված անձ՝ Գևորգ Վանիկի Մկրտչյանի և Ասատուր Եղիայի Պողոսյանի (ծնված՝ 23.03.1979թ.) լիազորված անձ՝ Էդուարդ Գարիկի Ավագյանի 02.05.2025 թվականի թիվ 02/6041 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 27.03.2025 թվականի թիվ 1580 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20250326-90-8869554), 27.03.2025 թվականի թիվ 1585 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20250327-90-8873452), 28.03.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1611 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20250327-84-8875299), 16.02.1993 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 01.05.2025թ. թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2025HEXRHQ), «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 27.05.2025 թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-128/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց թիվ 39 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ դրան կից 36.6քմ մակերեսներով հողամասերը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1971-1995թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 236.6քմ:

Դեկլարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չափապանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ

ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով,՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Եղիա Ասատուրի Պողոսյանի(1/2) և Ասատուր Եղիայի Պողոսյանի(1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց թիվ 39 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 200.0քմ մակերեսով հողամասին կից 36.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Եղիա Ասատուրի Պողոսյանի (1/2) և Ասատուր Եղիայի Պողոսյանի (1/2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց թիվ 39 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան կառուցման և սպասարկման համար 236.6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3.Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոց թիվ 39 հասցեում գտնվող 236.6քմ մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մ. Մաշտոցի փողոց, 39/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N1943

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1906 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 11 օգոստոսի 2025 թվականի 1906 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 11 օգոստոսի 2025 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Բ. Կնունյանց փողոց 46/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Նորայր Սերյոժայի Բուլղաղարյանին վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» թիվ 1906 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Որոշման վերնագրում՝ «վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» բառերը փոխարինել «օտարելու մասին» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 14
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N1944

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃԵՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Դավթյանի (ծնված՝ 04.07.1950թ.) լիազորված անձ՝ Սուսաննա Գուրգենի Դավթյանի 30.12.2024 թվականի թիվ 02/22012 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /244562/, 17.09.2024 թվականի թիվ 7053 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20240917-90-8342421), 27.11.2024 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 8867 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20241126-84-8551794), 05.05.1989 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՈՌԻԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 03.07.2025թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-165/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 15 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ և նրան կից 120.6քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1960-1994թթ.-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 420.6քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Սեյրան Դավթյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ մակերեսով հողամասին կից 120.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Սեյրան Դավթյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 15 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 420.6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 15 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, 0.042060 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

4. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 15 հասցեում գտնվող 0.042060 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Ավետիսյան փողոց, 15 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N1945

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 7/4
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՇՈՏ
ՂԱՐԻՔԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Ղարիքի Համբարյանի 25.10.2023 թվականի թիվ 02/18489 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12062025-06-0028 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ա. Շիրակացու փողոց 7/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 23.76քմ մակերեսով ավտոտնակը 64750 (վաթսուներես հազար յոթ հարյուր հիսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.76քմ մակերեսով հողամասը 249810 (երկու հարյուր քառասունինը հազար ութ հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Աշոտ Ղարիքի Համբարյանին :

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Աշոտ Ղարիքի Համբարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1946

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ
ՆՐՔԱՆՑՔ 8/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՖՅԱ ԽՈՒԴԱՎԵՐԴՈՒ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոֆյա Խուդավերդու Խուդավերդյանի 22.12.2023թվականի թիվ 02/22926 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19052025-06-0073 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մ. Մաշտոցի փողոց 3-րդ նրբանցք 8/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 25.20 քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակը 58370 (հիսունութ հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 25.20քմ մակերեսով հողամասը 172230 (հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սոֆյա Խուդավերդու Խուդավերդյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սոֆյա Խուդավերդու Խուդավերդյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N1947

«ԲՈՒ» ԼԵՌՆԱՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՊԱՐԿ ԶԲՈՍԱԾՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված արձանագրության, զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 24.07.2025թ. կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ քաղաք Վանաձոր Մյասնիկյան 42 հասցեում գտնվող «Բու» լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման ՀԿ-ն, ի դեմս տնօրեն Էմմա Պետրոսյանի, առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հողային աշխատանքներ:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի օգոստոսի 04-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին պատշաճ ծանուցվել է «Բու» լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման ՀԿ տնօրեն Էմմա Պետրոսյանը, ով վարչական վարույթի լսումների ընթացքում հայտնել է, որ 76/6-5/2 հասցեի հողամասում, որը տրամադրվել է անհատույց օգտագործման իրավունքով իրականացրել են մաքրման աշխատանքներ: Էմմա Պետրոսյանին տրված հարցին թե «Բու» լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման ՀԿ-ին վարձակալությամբ տրամադրված տարածքում հողային աշխատանքներ կատարվել են թե ոչ, վերջինս հայտնեց, որ կատարվել են միայն մաքրման աշխատանքներ:

Լրացուցիչ ստուգումներ կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07.08.2025

թվականին ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<Բու>> լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման ՀԿ-ի կողմից ի դեմս տնօրեն Էմմա Պետրոսյանի, հողային աշխատանքները կատարվել են քաղաք Վանաձոր Մյասնիկյան փողոց 76/6-5/2 հասցեի հողամասում, կադաստրային ծածկագիր 06-001-0463-0100, նշված հողամասը անշարժ գույքի իրավունքի պետական գրանցում է ստացել 24 սեպտեմբերի 2020 թվականին, վկայական թիվ 24092020-06-0023, որից հետո սույն հողամասը անհատույց օգտագործման իրավունքով տրվել է նշված ՀԿ-ին:

2020թ. նոյեմբերի 6-ին տրվել է թիվ 362 շինթույլտվություն՝ քաղաք Վանաձոր Մյասնիկյան փողոց 76/6-5/2 և սեփականության իրավունքով վերագրյալ ՀԿ-ին պատկանող քաղաք Վանաձոր Մյասնիկյան 90/2-3 հասցեում գտնվող 161.9 քմ մակերեսով հողամասերում 1,5 տարվա ընթացքում հեծանվային կենտրոն կառուցելու նպատակով:

Նշված ՀԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված քաղաք Վանաձոր Մյասնիկյան փողոց 76/6-5/2 հասցեի հողամասում կատարված հողային աշխատանքներն իրականացվել են առանց համապատասխան թույլտվության:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ունեցվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց

թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 219¹-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Բու» լեռնահեծանվային պարկ զբոսաշրջության զարգացման ՀԿ-ի տնօրեն Էմմա Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՒՆԱՅԻՆ



[Handwritten signature]

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ